ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 40

«07» 04 2021 թ. ք. Երևան

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎՈՂ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասը և ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով ու 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում հաշտության համաձայնության կնքման կարգը՝ համաձայն հավելված N 1-ի (կցվում է):

2. Սահմանել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում կնքվող հաշտության համաձայնության օրինակելի ձևը՝ համաձայն հավելված N 2-ի (կցվում է):

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2021 թվականի ապրիլի 7 -ի
թիվ «40» հրամանի

ԿԱՐԳ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՆՔՄԱՆ

1. Սույնով սահմանվում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում հաշտության համաձայնության կնքման կարգը:

2. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու առաջարկով կարող է հանդես գալ թե՛ իրավասու մարմինը, թե՛ այն անձը, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք: Վերջինս նման առաջարկ կարող է անել նաև ներկայացուցչի միջոցով:

3. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը կարող է ավարտվել հաշտության համաձայնությամբ, եթե անձը, որին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, ներկայացնում է Օրենքով նախատեսված հայտարարագիր, որը համապատասխանում է Օրենքով և ՀՀ կառավարության՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում ներկայացվող հայտարարագրերի նմուշային ձևը և լրացման կարգը հաստատելու մասին» 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2044-Ն որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) սահմանված պահանջներին: Այն պարագայում, եթե ներկայացված հայտարարագրում առկա են թերություններ (վրիպումներ, ոչ իրավաբանական անճշտություններ, թվաբանական սխալներ և/կամ նման այլ բացթողումների) կամ անհամապատասխանություններ Օրենքով կամ Որոշմամբ սահմանված պահանջներին, ապա իրավասու մարմինը վերադարձնում է հայտարարագիրը՝ տրամադրելով անձին ողջամիտ ժամկետ դրանում առկա թերությունների և անհամապատասխանությունների վերացման համար:

4. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու վերաբերյալ առաջարկը կարող է ներկայացվել ցանկացած պահի, սակայն հաշտության համաձայնություն կարող է կնքվել ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփումից և եզրակացության կազմումից հետո:

5. Այն պարագայում, երբ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու վերաբերյալ առաջարկով հանդես է եկել իրավասու մարմինը, ապա այն անձը, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք (նրա ներկայացուցիչը), կարող է ներկայացնել իր գրավոր համաձայնությունը հաշտության համաձայնության կնքման վերաբերյալ առաջարկի ներկայացումից հետո 1 ամսվա ընթացքում: Այն պարագայում, եթե անձը սույն կետով սահմանված ժամկետում չի ներկայացնում իր համաձայնությունը հաշտության համաձայնության կնքման վերաբերյալ, ապա համարվում է, որ անձը մերժել է տվյալ առաջարկը:

6. Այն պարագայում, երբ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունը հաշտության համաձայնության կնքմամբ ավարտելու վերաբերյալ գրավոր առաջարկով հանդես է գալիս այն անձը, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, ապա իրավասու մարմինը ստուգում է Օրենքով հաշտության համաձայնության կնքման համար սահմանված պայմանների պահպանվածությունը: Այն պարագայում, եթե պայմանները պահպանված չեն, իրավասու մարմինն առաջարկում է 10 օր ժամկետում իրականացնել համապատասխան պայմանների պահպանման համար անհրաժեշտ գործողությունները:

7. Կնքվող հաշտության համաձայնությունը պետք է առնվազն ներառի սույն հրամանի հավելված N 2-ով սահմանված պայմանները:

8. Հաշտության համաձայնության և դրա հավելված N 2.1-ի վերնագրերում, ինչպես նաև հավելված N 2-ի առաջին պարբերության վերևի հատվածում լրացվում են հաշտության համաձայնության հերթական համարը, ինչպես նաև կնքման տարին, ամիսը և ամսաթիվը:

9. Հաշտության համաձայնության առաջին պարբերության շրջանակներում լրացվում է իրավասու մարմնի կողմից համաձայնությունը ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը և հայրանունը: Համաձայնության երկրորդ պարբերության շրջանակներում լրացվում է այն անձի (նրա ներկայացուցչի) անունը, ազգանունը և հայրանունը, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք:

10. Հաշտության համաձայնության 4-րդ պարբերության և 1.1. կետի շրջանակներում լրացվում են այն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի նույնականացման տվյալները, որի շրջանակներում կնքվում է հաշտության համաձայնությունը:

11. Հաշտության համաձայնության 5-րդ պարբերության շրջանակներում լրացվում է անձի կողմից Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով և բովանդակությամբ հայտարարագիր ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը:

12. Հաշտության համաձայնության և դրա հավելված N 2.1-ի «Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները» բաժնում լրացվում են անձի անունը, ազգանունը և հայրանունը, անձնագրային տվյալները, հաշվառման և փաստացի բնակության վայրի հասցեները (ներկայացուցչի առկայության դեպքում նաև ներկայացուցչի տվյալները), ինչպես նաև իրավասու մարմնի կողմից հաշտության համաձայնությունը ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը և հայրանունը:

13. Հաշտության համաձայնության հավելված N 2.1-ի շրջանակներում լրացվում են այն գույքի՝դրամով արտահայտված շուկայական արժեքի տվյալները, որոնք հաշտության համաձայնությամբ անհատույց հանձնվում են Հայաստանի Հանրապետության սեփականությանը:

14. Իրավասու մարմնի կողմից հաշտության համաձայնությունը ստորագրում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության պետը և ՀՀ գլխավոր դատախազի՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող տեղակալը:

15. Հաշտության համաձայնությունը Օրենքով սահմանված կարգով ներկայացվում է դատարանի հաստատմանը դրա կնքման պահից 3 աշխատանքային օրվա ժամկետում: Այն անձը, որին ենթադրաբար պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, դատարան ներկայացվող դիմումի շրջանակներում նաև հավաստում է, որ հաշտության համաձայնության մեկ օրինակը տրամադրվել է իրեն դրա ստորագրման օրը՝ հավաստված իր ստորագրությամբ:

Հավելված N 2

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2021 թվականի ապրիլի 7-ի
թիվ «40» հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎՈՂ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N

ք. Երևան ----------
ամսաթիվ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը (այսուհետ նաև՝ Հայցվոր), ի դեմս ----------
(համապատասխան պաշտոնատար անձի պաշտոնը և անուն, ազգանունը),
մի կողմից, և ---------- (այսուհետ նաև՝ Պատասխանող) ի
(լրացնել անձի տվյալները)
դեմս նրա ներկայացուցիչ ---------- մյուս կողմից,
(լրացնել անձի տվյալները)
ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 18-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի կարգավորումներով, հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ---------- վարույթի
(լրացնել վարույթի տվյալները)
շրջանակներում կատարված ուսումնասիրության (այսուհետ նաև՝ Ուսումնասիրություն) արդյունքները և այն հանգամանքը, որ առկա են բավարար հիմքեր ենթադրելու, որ Պատասխանողին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որի արժեքն ուսումնասիրության արդյունքներով գերազանցում է Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված շեմը՝ 50 միլիոն ՀՀ դրամը, հաշվի առնելով, որ Պատասխանողն Օրենքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով և բովանդակությամբ ----------
(լրացնել ամսաթիվը)
ներկայացրել է հայտարարագիր, կնքեցին սույն հաշտության համաձայնությունը (այսուհետ նաև՝ Համաձայնություն) հետևյալի մասին.

1. Համաձայնության առարկան

1.1. Կողմերը համաձայնում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ---------- վարույթն ավարտել հաշտության համաձայնությամբ՝ սույն
(լրացնել վարույթի տվյալները)
Համաձայնությամբ նշված պայմաններով:

2. Գույքի փոխանցումը

2.1. Պատասխանողը Համաձայնությունը հաստատող վճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից Հայաստանի Հանրապետության սեփականությանն անհատույց հանձնում է հավելված N 2.1-ով նախատեսված գույքը (այսուհետ նաև՝ Գույք), որի արժեքը կազմում է ---------- ՀՀ դրամ, որը կազմում է Ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի ---------- տոկոսը[1]:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնությունը, կողմերի իրավունքները և պարտավորությունները կարգավորվում և մեկնաբանվում են Օրենքին և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

3.2. Սույն Համաձայնությունը ենթակա է հաստատման դատարանի կողմից՝ Օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

3.3. Պատասխանողը տալիս է իր անվերապահ համաձայնությունն առ այն, որ Համաձայնության՝ դատարանի կողմից հաստատումից հետո Գույքի նկատմամբ Հայցվորի նախաձեռնությամբ կիրառվեն ցանկացած տեսակի սահմանափակումներ, արգելանքներ, Հայցվորի կողմից կատարվեն գործողություններ Գույքը հօգուտ Հայաստանի Հանրապետության փոխանցելու ուղղությամբ:

3.4. Սույն Համաձայնությամբ չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.5. Եթե Համաձայնության որևէ դրույթ ճանաչվում է անվավեր, ապա այդպիսի անվավերությունը չի հանգեցնում Համաձայնության որևէ այլ դրույթի վավերության վրա,

---

[1] Համաձայնությամբ Հայաստանի Հանրապետությանն ապօրինի ծագում ունեցող գույքը փոխանցվում է բնեղենով, իսկ եթե այդպիսի գույքը փոխանցվել է բարեխիղճ ձեռք բերողի, ծանրաբեռնված է այլ անձանց իրավունքներով, կամ այն անհնար է նույնականացնել, առանձնացնել կամ բռնագանձել, ինչպես նաև եթե այդպիսի առաջարկով է հանդես գալիս անձը, որին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույքը, ապա Հայաստանի Հանրապետությանն է փոխանցվում դրա շուկայական արժեքը դրամով:
Հաշտության համաձայնությամբ չի կարող սահմանվել հօգուտ Հայաստանի Հանրապետության գույքի փոխանցման ավելի ցածր չափ, քան ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության տվյալներով ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի արժեքի 75 տոկոսը:

եթե Համաձայնությունը կարող էր կնքվել նաև առանց անվավեր մասը դրա մեջ ներառելու:

3.6. Կողմերը հավաստում են, որ սույն Համաձայնությունը կնքվել է առանց խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի մյուս կողմի հետ չարամիտ համաձայնության կամ ծանր հանգամանքների բերումով՝ ազատ կամարտահայտության սկզբունքով: Կողմերը նաև հավաստում են, որ ամբողջությամբ գիտակցում են Համաձայնության իմաստը և բովանդակությունը, դրանից բխող իրավական և գույքային հետևանքները:

3.7. Կողմերը հավաստում են, որ Համաձայնությունը համապատասխանում է Օրենքին, այլ իրավական ակտերին և չի խախտում այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:

3.8. Սույն Համաձայնությունն ուժի մեջ է մտնում Համաձայնությունը հաստատելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից և ենթակա է կատարման: Համաձայնությունը կամովին չկատարելու դեպքում այն կատարվելու է ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ Համաձայնության դրույթները խախտող կողմի հաշվին:

3.9. Կիրառված հայցի ապահովման միջոցները ենթակա չեն վերացման, մինչև վճռի կատարումը:

3.10. Սույն Համաձայնության կնքման առնչությամբ առաջացած ծախսերը, այդ թվում՝ դատական ծախսերը, ինչպես նաև ուսումնասիրության իրականացման հետ կապված այլ ծախսերը կրում է Պատասխանողը, որը կազմում է ----------:

3.11. Սույն Համաձայնությունը կազմված է հայերեն, 3 հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Մեկ օրինակը հանձնվում է Պատասխանողին, մեկը՝ Հայցվորին, և մեկ օրինակ ներկայացվում է դատարան Օրենքով սահմանված կարգով հաստատման համար:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Հայցվոր	**Պատասխանող**

հավելված N 2.1

N ---------- հաշտության համաձայնության

(լրացնել համարը)

(լրացնել կնքման ամսաթիվը)

---------- թվականի N ---------- հաշտության

(լրացնել կնքման ամսաթիվը) (լրացնել համարը)

համաձայնության շրջանակներում Պատասխանողի կողմից Հայաստանի Հանրապետության սեփականությանն անհատույց հանձնվում է հետևյալ գույքը.

1. ----------
2. ----------

(լրացնել գույքի տվյալները)

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Հայցվոր	**Պատասխանող**
_____	_____